Հայաստան։ Սրա վրան աւելացան և խիստ երկպառակութիւններ կովկաս—պոնտոսեան երկրների վերաբերութեամբ, որոնց վերայ երկու տէրութիւններն էլ գերիշխանութեան իրաւունքներ էին յայտնում։ Սակայն Կաւատն այդ ժամանակ քիչ ցանկութիւն ունէր կռուի։ Թերևս նա համոզուել էր, որ տևական օգուտներ անհնար է ձեռք բերել։ Կրկին և կրկին նորոգուող բանագնացութեանց մէջ նա միայն մի դիտաւորութիւն ունէր։ Նա ցանկանում էր Խոսրովին, իւր ամենասիրելի և անշուշտ ամենաընդունակ որդու համար գահն ապահովել, թէպէտ և նա աւագ չէր, այդ նպատակով մի տեսակ երաշխաւորութիւն էր ուզում կայսրից, որ պէտք է Խոսրովին որդեգրէր։ 1 Այս և այլ բաների մասին բանագնացութիւններ էին անում Մծբնում։ Եթէ գործերի ընթացքն այնպէս են, ինչպէս մեզ հաղորդուած է, ասել է թէ հռովմայեցիք շատ սխալ են վարուել։ Յամենայն դէպս բանագնացութիւններն ապարդիւն եղան և երկու կողմերն էլ սաստիկ դըժգոհ մնացին։ Հռովմէական պատգամաւորութեան պարագլուխը պաշտօնանկութեամբ ազատուեցաւ, իսկ պարսկականինը, որ թէպէտ թագաւորին անձնականապէս մեծ ծառայութիւն էր մատուցել, գլխատուեցաւ։ Այս բանագնացութիւնները տեղի են ունեցել 525 կամ 526-ին։ Կռիւն 2 սկսաւ դեռ Յուստին կայսեր մահուանից առաջ։ Արդէն 527-ի ամառը սահմանի վրայ կատաղութեամբ կռւում էին։ Հռովմէացիք մի ապարդիւն յարձակումն արին Մըծբնի վրայ, պարսիկներն էլ մի նոյնպիսի անհետևանք արշաւանք Դարայի վրայ։

Կը շարունակուի.

Ն. Քարամեան

## Մովսէս Կաղանկատուացւոյ Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակները:

(Երկրորդ խումբ):

### № 1721

Անթուական.

(Շարունակութիւն) 1.

ԱՆՈՒՆ. Յաղագս պատմութեան երկրիս Աղուանից: ՆԻՒԹ. Թղթեայ: ԿԱԶՄ. տախտակեայ կաշեպատ ներսից լաթածածք: ՀԱՆԳԱՄԱՆՔ. Վերջից երեք տետր գլխի վերևի ծայրերից այրուած է լուսանցքներից: ԴԱՏԱՐԿ. ԹՈՒՂԹ 5 բ. երես, 264 բ. 280 բ, 281, 282: ՄԵԾՈՒԹԻՒՆ 17×11 սմ. ԹՈՒՂԹՔ. 288: ԳՐՈՒԹԻՒՆ. Միասիւն. 7×12 սմ: ԳԻՐ. Նոտրագիր: ՏՈՂՔ. 21—22: ՎԵՐՆԱԳԻՐՔ. Մինչեւ թղթ. 265 կարմիր թանաքով՝ մնացեալ սեւ: Սկզբնատառք կարմիր երկաթագիր. իսկ թուղթ 4 ա. 50 բ. 51 բ. 56 ա. 57 բ. 63 բ. 66 ա. 71 բ. 89 ա. 90 ա. 90 բ. 92 բ. 95 բ. 96 ա. 107 ա. 114 բ. 129 բ. 133 ա. 135 ա. 144 բ 171 բ. 181 բ. 183 բ. 188 ա. 189 բ. 192 ա. 198 բ. 209 բ 210 ա 214 ա. 215 ա. 215 բ. 224 բ. 227 բ. 229 բ. 235 ա. 236 բ. 238 ա. 238 բ. 239 ա. 239 բ. 240 բ. 244 ա. 245 ա. 246 ա. 251 ա. 253 բ. 256 ա. 258 բ. 259 բ. 261 ա. խոշոր ծաղկագիր գլխագիր-գլխատառեր զանազան ձեւի եւ մեծութեան:

Թուղթ՝ 64 ա. 70 ա 73 ա. 76 ա. 80 բ. 85 ա. 97 բ. 127 բ. 139 ա. 143 ա. 147 ա. 148 ա. 150 ա. 152 ա. 155 բ. 160 բ. 169 ա. 170 բ. 177 բ. 186 ա. 217 ա. 221 ա. 232 բ. Թռչնագրեր զանազան ձեւի եւ մեծութեան:

Իսկ թուղթ՝ 104 բ. 166 ա. 207 բ. ձկնագիր են: ԽՈՐԱՆԱԶԱՐԴՔ. Թուղթք 4 ա. 80 բ. 232 ա. իւրաքանչիւր գրքի սկզբում: Լուսանցազարդեր եւ ծաղկազարդեր են թուղթք 4 ա. 50 բ. 51 բ. 56 ա. 57 բ. 64 ա. 65 բ. 66 ա. 70 ա. 71 բ. 73 ա. 80 բ. 85 ա. 89 ա. 90 ա. 92 բ. 95 բ. 96 ա. 97 բ. 107 ա. 111 բ. 114 բ. 127 բ. 129 բ. 133 ա. 135 ա. 143 ա. 144 բ. 147 ա. 153 բ. 160 բ. 166 ա. 169 ա. 170 բ. 171 բ. 177 բ 181 բ. 183 բ. 186 ա. 188 ա. 189 բ. 192 ա. 198 բ. 207 բ. 209 բ. 210 ա. 211 ա. 213 ա 213 բ. 217 ա. 221 ա. 224 բ. 232 ա. 235 ա. 236 բ. 238 ա. 239 ա. 240 բ. 244 ա. 245 ա. 246 ա. 251 ա. 252 բ 253 բ. 255 բ. 256 ա. 258 բ. 259 բ. 261 ա. զանազան մեծութեամբ ծաղկազարդեր: Թռչնազարդեր—թուղթք՝ 76 ա. 171 բ.: Կաթուղիկէազարդք թուղթք 147 բ. 148 ա. 227 բ. 229 բ: Արեգակնազարդք՝ թուղթք 73 ա. 104 բ. 139 բ: ՍՏԱՑՈՂ. անյայտ: ՏԵՂԻ անյայտ: ԳՐԻՉ Յովհաննէս Գիտակ սպասաւոր Եխուսի: ԺԱՄԱՆԱԿ անյայտ: ՊԱՏԿԵՐՔ՝ թ. 130 ա. Ջուանշիր իշխան ծնկաչոք աղօթում է. 132 ա. Նոյն իշխանը աթոռի վրայ նստած, թագը գլխին գայիսոնը ձեռքին. երկու նկարածների մէջ էլ սեւ մօրուով արքայավայել ծիրանին հագած. աղօթելու ժամանակ թագը վերցրած, ծնկաչոք եւ ձեռնամած:

## Տեղեկութիւնք եւ Յիշատակագրութիւնք.

Թ. 1ա «Յաղագս պատմութեան երկրիս Աղուանից։

Ցանկ առաջի գլխոյն։

Թ. 2ա. Նոյն երեսում ցանկի գլխացոյց թուատառերը ԺԷ-ից սկսած սխալուած է փոխանակ ԺԸ-ի ԺԷ.։

Թ. 4ա Նախերգան սակս պատմութեան Աղուանից։

Թ. 13բ. Նոյն երեսում տողերի մէջ գրուած է շղագրով. «սուտ է այսքանս զոր ընդնաձևեցաք. ոչ «թէ ի հարկէ սուտ է և յետոյ ներմուծեալ ի սը«նապարծից յօգուտ անձանց, զի ի յայլս պատմու«թիւնս ոչ գոյ բնաւ։ Իսկ թէ յԱնանիայ կա«թուղիկոսէն յետոյ այսպէս արարին աղուանից «սեպգլուխքն»։

---

1) Գլխաւոր խնդիրն այն է, որ Խոսրովի նշանակութիւնը «կայսեր որդի» անունով անշահ կը բարձրանար, տիտղոսների եւ պատիւների մեծապէս սիրահար պարսիկների մէջ:

2) Գլխաւոր աղբիւրն է բացի Պրոկոպիոսից մի ասորական պատմութեան (Land's Anecdota syr. Bz' 3).

1. Տես Արարատ. համար 10. եր. 388—590:

Թէ ո՛վ է եղել սոյն շղագրով գրողը և թէ ինչո՞ւ համար է գրած, այս մասին մանրամասն կը բացատրուի երբ Աղուանից պատմութեան երկու խմբերի տարբեր և հակասական կտորները առաջիկայ համարում լոյս կը տեսնեն։

Թ. 78ա. Կատարեցան գիրք առաջին պատմութեանս Աղուանից. երկրորդ պատմութիւն Արեւելեացս Աղուանից նահանգիս։

Թ. 80ա. Կատարեցան երկրորդ ցանցք պատմութեանս Աղուանից, յորում բաղում և ազգի ազգի գրուցատրութիւնք գտանին։

Թ. 160ա. «զՑօհաննէս պիտակ սպասաւոր Ցիսուսի յիշեալ աղաչեմ». գրիչը և մելանը նոյն է ինչ որ ձեռագրինը—գրչագրինը.

Թ. 230բ. Շարած երկրորդ միջակ պատմութեան Աղուանից, Երրորդ ցանցք պատմութեան Աղուանից։

Թ. 243ա. Լուսանցքում շղագրով աւելացրած է. «և յետոյ ի սրբոյն Գրիգորէ և ապա ի սուղ ժամանակս» իսկ սորա փոխարէն գրչագրից սոյն երեսում մի տող ջնջած է ամբողջովին։

Թ. 243բ. Սոյն երեսում նմանապէս շղագրով տողամէջ գրած է նոյն գրչով և նոյն մելանով «Թուի թէ յետ Անանիա կաթուղիկոսին արարին այսպէս. զի սուտ է և այսքանս, զի յայլ պատմագիրս ոչ է այսպէս. որպէս տեսանես ի Սիւնեացն և յայլս պատմագիրս»։

Թ. 265ա. Սոյն երեսից սկսած և թուղթը և գրչութիւնը փոքր ինչ տարբերուում է։ Այս տարբերութիւնը աւելի ես նշմարելի է նրանով՝ որ այս երեսից մինչև ի վերջի 288 երեսը շարունակ մի մի սանտիմետր լայնութեամբ տողած է լուսանցքի համար երկու կողմից էլ։

Թ. 275բ. Սոյն երեսում վերջի երկու տողի շղագիր գրչութիւնը «Բ. ապա սուրբն Գրիգորիս թոռն Մեծին Գրիգորի Լուսաւորչին Հայոց. այս . . . ցեն։

Թ. 276ա. Սոյն երեսում էլ Ը. կաթուղիկոս Գրիգորիսին ջնջած և վերևը տողամէջի պարապ տեղում գրած «Ղուփաղիս այս ի ժամանակս բարեպաշտին Վաչականին են. տես ի պատմութիւնդ։

Թ. 280. Սոյն երեսում նոտրագրով գրած է «Հր. տէր Մելքիսեթ արաշեցի հայրե . . . սուր գեղ բնակեալ մերձ ի Գանձասար։ Նոյն գրչով. «ՀԷ տէր Սիմէօն Զարաբերդոյ, ՌՃԽԴ Խոտրաշինացի. ՀԸ Տէր Երեմիայ Ճալալեցի ՌՃԽԴ հակառակութիւն լեալ զԵրեմիայն օրհնեցին անձամբ առեալ զկաթուղիկոսութիւն. միատեղ վարեն չարչարանօք. ՀԹ. Տէր Ներսէս Մեծգունէից Խոտրաշինացի ՌՃԾԽ, Չ. ցէր Եսայի Քուլատակեցի ՌՃԾ, ՉԱ. Տէր Իսրայէլ Խոտրաշինացի Մեծգունէից, ՌՄԺԲ,

Այս տողից յետոյ յիշածս շղագրով գրածն է. «Սուտ է զայս զի վեց ամաւ յառաջ Եսային է օծեցեալ քան զՆերսէս» ընդգծած Խոտրաշինացի բառերը սոյն գրչին են պատկանում։

Թ. 283ա. «Պատմութիւն վասն Մահմետին» սոյն գլուխը նման է Գ. գրքի առաջին գլխի հետ։

Թ. 285բ. «Որ յետ մահմադա եղեն ամիր մոմնէ»։ Նման Գ. գրքի Բ. գլխին։

Թ. 286բ. «Ապստամբութիւնն հայոց և մահմետին գալն հայս. և առումն Սևանայ. և մահն մահմետին»։ Սոյն գլուխն էլ նման է Գ. հատորիս ԺԶ. գլխին. ինչպէս երևում է Մահմետի վերաբերեալ գլուխները առանձնապէս արտագրել են կրկին և ձեռագրի վերջին կպցրել։

Թ. 289. Սոյն թուղթը կտրուած է ձեռագրից և Աղուանից պատմութեան հետ ոչ մի կապ չունի. միայն թուղթը գրչութիւնը պատմութեանս հետ նոյն է. բովանդակութիւնն որ է այսպէս՝

| ՍԵՄ | ՔԱՄ | ԱԲԵԹ. |
|---|---|---|
| Արփաքսաթ. | Քուշթ. | Փամիր. |
| Կայնան. | Մեստրախ. | Թիրաս. |
| Սաղա. | Նեփրովթ. | Թորգոմ. |
| Եբեր. | Բար. | Հայկն. |
| Փաղէկ. | Արբել. | Արմայիս. |
| Ռագաւ. | Անիրիս. | Արմանեկ. |
| Սերուգ. | Քաղա. | Ամասիա. |
| Նաքովր. | Արբեղինոս. | Գեղամ. |
| Թարա. | Նինուաս. | Հարմայ. |
| Աբրահամ. | | Արամ. |

Կամբիաս քաղթէացին. շինեաց զսպահան և հրամանաւ նորին սկսաւ ոսկեհալութիւն և արծաթահալութիւն։ Եւ թագաւորն Սամիրոս սկսաւ դընել չափ և կշիռ. և հնարեցաւ, զզոյն ներկուածոյ. և զնկարս ճարտարաց. և դրամս. և զգահեկանս. անուամբ կնքոյ իւրոյ. և կաշէգործութիւն. դնել զպատկերս ի կտաւուց։ Եւ ասեն թէ. Գ. աչք ունէր. և եղջիւր մի ի ճակատին հսկայ ձև էր Սամիրոս։

Ադամա մինչև ի ծնունդն Քրիստոսի։ Են ամք. Բ. Հ. Ի. և ի Քրիստոսէ մինչև ի սուրբն Գրիգոր. ՅԵ. և ի սրբոյն Գրիգորէ մինչև ցհայ. թուականն. ՄԻԸ. և ի Քրիստոսէ մինչև ի Մահմէտ, Ո. ԼԸ, Յետ ջրհեղեղին եղև Նոյի որդի մի Մանիտոն անուն. և դուստր մի Աստղիկ անուն։ Եւ բաժանեաց աշխարհս որդւոց իւրոց, զԱսիա ետ Սեմա, զԼիբիա ետ Քամայ, զՈրբիա ետ Աբեթի, Մանիտոնի ետ մասն ինչ յարեւմտից. և մասն մի յարևելից, Հարաւոյ կողմն զտեղն Հայաստան։

Ուստի գշխոյն հարաւոյ որ եկն լսել զիմաստութիւն Սողոմոնին սա էր անունն Ասիա Նիկաւլէ։ Այս է աշխարհս ․Գ․ բաժին․ Ասիա․ Լիբիա․ Եւրոպիա․ Ասիամէջ յերկրի․ Լիբիա․ Հապաշք․ և Հնդիկք․ Եւրոպիա Փռանգք․ յարևմուտէ։

Աղէքսանդրէ Մաճկեդնացոց՝ մինչև ի Քրիստոսի Ծնունդն՝ Յ.Լ.Դ.՝ Ամէն։

(Շարունակելի)

Խ. Վ.

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ․

### Ա. Նամակ.

*Սիրելի Վահան.*

Քանի՞ ամիս եղաւ արդեօք աշակերտական նստարանը թողնելդ, որ այսպէս ճերմակ ուսուցչիդ օգնութեանն ես դիմում և նամակ նամակի յետևից թղթելով խորհուրդներ ես խնդրում ուսուցչական գործունէութեանդ համար։ Դպրոցում քո ցոյց տուած անխոնջութեանդ և ազատ դրսևորմունքների համար ունեցած սէրդ ինձ այն համոզմունքն էր ազդել, որ դու դպրոցի շեմը թողնելուց և ուսուցիչների ստիպմամբ ուսանելուց ազատուելով, հազիւ թէ նոյն իսկ ողջունի գիր գրես ում և իցէ քո դաստիարակներիցդ։ Իմ այդ համոզումն այնքա՛ն հաստատուն էր, որ պիտի խոստովանիմ՝ թէ ուրիշ շարժառիթների էի վերագրում նամակներդ։ Չը դժկամակիս այս խոստովանութեանս վերայ, որովհետև դա բղխում է գրեթէ տասնամեայ ուսուցչական փորձառութիւնից։ Քանի՜ քանիները քեզ պէս հազիւ թևաւորուած թողել են այն դպրոցների յարկերն, ուր ես ուսուցչութիւն եմ արել և սակայն դրանցից ոչ մէկն էլ կենդանութեան նշան չէ տուել դպրոցից բաժանուելուց յետոյ։ Չը կարծես որ ես այդ անձնական վիրաւորանք եմ համարում, ոչ, ինձ ուրիշ ցաւ է պատճառել, որ այդ շրջանաւարտները մոռացել են իրենց խնամարկող վայրը, հոգևոր ծննդավայր հայ դպրոցը։

Արդեօք ո՞րն է այդ մեղքը, դպրոցի՞նը, ուսուցիչների՞նը՝ թէ՞ սաներինը։ Բայց այդ հարցման ես դեռ չեմ պատասխանիլ, դու դրա պատասխանն ինքդ գուշակիր իմ նամակից։ Ընդունիր արդ իմ շնորհակալիքս, որ այդ առիթ համոզումս եկել ես այն վայրկեաններին խախտելու, երբ ես ամենուստեք միմիայն անտարբերութիւն տեսնելով պատրաստ էի այդ անպտուղ ասպարէզը թողնելու։ Գէօթէի խօսքերով կուզէի քեզնից շնորհակալ լինել „Doch, ach! für. diesmal dank ich dir, ... (Faust 255 և 257).

Դառնամ սակայն խնդրիդ, ուսուցչութիւնը քեզ ծանր է գալիս. դու առաջնորդի ես կարօտ, որ գլխիդ մէջ ամբարած գիտութիւնից և սրտիդ մէջ փակած զգացումներից բաժին հանես աշակերտներիդ։ Դրանով իսկ ճանաչում եմ, որ կոչումն ունիս պաշտօնիդ համար և ի սրտէ քեզ օգնել կուզէի, բայց ի՛նչպէս, մանկավարժութեան դասեր տալու հնար չը կայ այլևս, դրան արգելք են ժամանակն և հեռաւորութիւնը։ Սակայն այսուամենայնիւ կամենում եմ քեզ օգնել, ուստի որոշեցի նամակներով աւանդել այն գործնական խրատները, որ անհրաժեշտ են ամէն մի ուսուցչի համար։ Մեր դարը գործնականութեան դար է, հեռուից դասաւանդելու հնարն ևս ճշգրտուել է, Եւրոպայում նամակներով լեզուի դասեր անգամ աւանդում են, ինչո՞ւ ուրեմն նոյն միջոցով հնար պիտի չը լինի մանկավարժութիւն աւանդել։

Այս նամակներով ես համակարգեալ մանկավարժութեան դասեր տալու ցանկութիւն չունիմ, իմ նպատակս է գործնական խրատների մի ամփոփումն տալ քեզ, որպէսզի դրանցով առաջնորդուիս, իսկ ժամանակի ընթացքում թերևս ինքնաշխատութեամբ միջոց ունենաս այն տեսութիւնների հետ ծանօթանալու, որոնց վերայ այդ խրատներն հիմնուած են։

Դու արդէն երկու ամիս է ուսուցիչ ես և անելիքներիդ մասին պարզ գաղափար չունիս, ամէնից առաջ ուրեմն քեզ կարևոր են այն խրատները, որ ուսուցչի անձնաւո-